I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայությունն իր առաջին քայլերը կատարել է 1918 թ. կեսերին. օգոստոսի 13-ին Նախարարների խորհրդի նիստի որոշմամբ կատարվում է շուրջ 40 հազար ռուբլու դրամական հատկացում հետախուզական և հակահետախուզական գործի կազմակերպման համար[1]: Ծառայության կայացման ճանապարհին կարևոր էր ՀՀ զինվորական նախարարի 1919 թ. ապրիլի 14-ի հրամանագիրը, որով հիմնականում ավարտվեցին հետախուզական ծառայության ձևավորման ուղղությամբ ընթացող կազմակերպչական գործընթացները, և ստեղծվեց Գլխավոր շտաբի հետախուզական ու հակահետախուզական բաժանմունքը[2]: Այն դարձավ քիչ թե շատ ավարտուն կառույց, որի անմիջական խնդիրների մեջ մտավ հակառակորդի և տեղանքի մասին փաստերի հավաքումը, այդ տվյալների մշակումը և դրանց մասին ժամանակին տեղեկատվություն հաղորդելը, բրիգադների շտաբների կողմից հետախուզական աշխատանքի ղեկավարումը, Հետախուզության համար տրամադրվող գումարների հաշվառումը, լրտեսության գեմ պայքարի կազմակերպումը[3]: Ծառայության աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Նախարարների խորհրդի 1919 թ. սեպտեմբերի 1-ի նիստի որոշմամբ 535 հազար ռուբլի է հատկացվում հետախուզության կարիքների համար, 1920 թ. հուլիսի 12-ի նիստի որոշմամբ էլ՝ ավելի քան 1,3 միլիոն ռուբլի[4]: Հետախուզության և հակահետախուզության ծառայության աշխատանքների կազմակերպման գործում այդ տարիներին որոշակի ներդրում ունեցան գնդապետներ Մ. Զինկևիչը, Ա. Շնեուրը, պորուչիկ Հովհան խան-Կոտուրսկին (Ա. Հովհաննեսովը), կապիտաններ Տ. Դևոյանցը, Վ. Մուրադյանը, պոդպորուչիկներ

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. Պ- 201, ց. 1, գ. 484, թ. 9, ֆ. Պ- 202, ց. 1, գ. 13, թ. 12, ֆ. Պ- 204, ց. 1, գ. 216, թ. 1:*

[2] *Հարկ է նշել, որ զինվորական նախարարության Գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետը նրա ստեղծման առաջին իսկ օրերից եղել է գնդապետ Ա. Շնեուրը, 1919 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. ապրիլը՝ կապիտան Վ. Մուրադյանը, ապրիլից մինչև հունիսի վերջը՝ կապիտան Տ.Դևոյանցը, հուլիսից մինչև Առաջին Հանրապետության անկումն ընկած ժամանակահատվածը՝ պոդպորուչիկ Մ. Դոդոխյանը, իսկ հակահետախուզության գործերը վարել է պորուչիկ Հ. խան-Կոտուրսկին. տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ.- 91, ց. 3, գ. 3594, թ. 2-20, ֆ.Պ- 199, ց. 1, գ. 29ա, թ. 215, ֆ. Պ- 200, ց. 1, գ. 92, թ. 206, ֆ. Պ- 204, ց. 1, գ. 40, թ. 23, գ. 104, թ. 61, գ. 131, թ. 24:*

[3] *ՀԱԱ, ֆ. Պ- 204, ց. 1, գ.132, թ. 54-55:*

[4] *ՀԱԱ, ֆ. Պ- 199, ց. 1 , գ. 100 , թ. 194, գ. 229, թ. 1, գ. 146ա , թ. 159, 172:*

Մ. Դոդոխյանը, Լ. Բաշինջաղյանը, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական վարչության[5] ղեկավար, այնուհետև ռազմական կցորդ գեներալ-մայոր Հ. Քիշմիշյանը (Քիշմիշև) և ուրիշներ[6]:

Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության գործունեության ուսումնասիրությունը, չնայած թեմայի խիստ արդիականությանը, անբավարար է հետազոտված: Այն հեղինակները, որոնք փորձել են անդրադառնալ այդ թեմային, նշում են հետախուզական ծառայության թուլությունը և նույնիսկ անգործունեությունը: Այդ տեսակետն են պաշտպանում դեպքերի ու իրադարձությունների ականատեսներ Յ. Իրազեկը, Կ. Ասունին, Վ. Արծրունին, Ալ. Խատիսյանը[7], պատմաբաններ Է. Զոհրաբյանը, Մ. Կարապետյանը[8]: Սակայն արխիվային փաստաթղթերը վկայում են հակառակը. ՀՀ հետախուզական ծառայությունը ոչ միայն աշխատել է արժեքավոր տեղեկատվություն հայթայթել թշնամական ուժերի կողմից նախապատրաստվող ու ծրագրվող սադրանքների մասին, որը նույնպես թեև փոքրածավալ, սակայն կարևոր աշխատանք էր, այլև, ինչպես ստորև կտեսնենք, ծառայությունը, ձեռք բերելով կարևոր տեղեկատվություն, որոշակի քայլեր է ձեռնարկել հակազդելու ՀՀ նկատմամբ թշնամական գործողություններին մերկացնելով և կանխելով հակառակորդի լրտեսների գործունեությունը հանրապետության տարածքում:

Անդրկովկասի և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության շուրջը ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրադրության պայմաններում հայկական հետախուզական ծառայությունը փորձում էր ոչ միայն սեփական ոտքերի վրա կանգնել, լուծել հանրապետության պետական անվտանգության ապահովման խնդիրները, այլև հնարավորինս արժեքավոր տեղեկություններ ձեռք բերելով Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի և այլ երկրների մասին որոշակի պատկերացում կազմել վերջիններիս ռազմաքաղաքական պատրաստությունների, զորքերի թվա-

---

[5] 1919 թ. նոյեմբերի 27-ին Հայաստանի պառլամենտի նիստում քննարկվել է ՀՀ բանակի բարձրաստիճան սպայի կողմից ղեկավարվող Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական վարչության վերակառուցման մասին հարցը. ըստ այդմ, 1920 թ. հունվարի 1-ից այն պետք է դադարեցներ իր գործունեությունը և կազմացրվեր: Դրան փոխարինելու էր ռազմական կցորդը. տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ- 199, ց. 1, գ. 118 (146), թ. 58-59, ֆ.Պ- 276, ց. 1, գ. 196, թ. 98, ֆ.Պ- 200, ց. 1, գ. 300, թ. 42–43, 45:

[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ- 199, ց. 1, գ. 29„, թ. 215, ֆ.Պ- 204, ց. 1, գ. 40, թ. 23, ֆ.Պ- 276, ց. 1, գ. 116, թ. 69-71, գ. 300, թ. 20-21, ֆ. Կ- 91, ց. 1. գ. 3594, թ. 2-20, «ՎԷՄ», Փարիզ, 1938, հունվար–մայիս, թիվ 2, էջ 49, R. G. H o v a n n i s i a n. The Republic of Armenia. Vol. II, From Versailles to London, 1919-1920, Berkeley. Los Angeles. Univ. of California Press, 1982, p. 68, 158, 160-162, 177, 195, 489. Ա. Ս ա ր գ ս յ ա ն. Հետախուզություն և հակահետախուզություն. հայկական հետք (կենսագրական ակնարկներ հետախույզների և հակահետախույզների մասին) , Երևան, 2005, էջ 194-195:

[7] Տե՛ս Յ. Ի ր ա զ ե կ. Մոտիկ անցյալից, պատմական դէպքեր, ապրումներ, 1917–1922, Պէյրութ, 1956, էջ 67, Կ. Ա ս ս ո ւ ն ի. Հայ-թուրքական պատերազմը (1920-ին). Պեյրութ, 1969, էջ 21, Վ. Ա ր ծ ր ո ւ ն ի. Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայությունը. Շատախ. Երևան, 2002, էջ73-74, 159, 165 և այլն, Ալ. Խ ա տ ի ս յ ա ն. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968, էջ 254:

[8] Տե՛ս Է. Զ ո հ ր ա բ յ ա ն. 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները. Երևան, 1997, էջ 348, Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հայաստանի Հանրապետության բանակը (1918–1920). Երևան, 1996, էջ 98–99:

քանակի, դրանց աեղաբաշխման, զինվածության մասին՝ արդյունավետորեն հակադդելու համար երիտասարդ հանրապետության նկատմամբ նրանց մեքենայություններին: Եվ քանի որ հոդվածի սուղ էջերը հնարավորություն չեն ընձեռում անդրադառնալ հարցի բոլոր նրբերանգներին ու մանրամասներին, փորձենք ընդհանուր գծերով պատկերացում տալ ծառայության դործունեության մասին:

Հայկական հետախուզության համակարգն իր ստեղծման օրից մեծածավալ աշխատանք էր կատարում: Այդ առումով խիստ ուշագրավ է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը կից տեղեկատվական բյուրոյի պետ Ա. Մելիք-Քարամյանի 1919 թ. ապրիլի 22-ի կազմած փաստաթուղթը, որի հիմքում ընկած էին դործակալական տվյալներ: Տեղեկագրում նշվում էր, որ Թուրքիայում հետպատերազմյան ժամանակահատվածում տեղի ունեցած կառավարական հեղաշրջումից հետո երիտթուրքական կոմիտեները ոչ միայն չեն դադարեցրել իրենց դործունեությունը, այլև, ընդհակառակը, հետագա քայլերը սկսել են կառուցել Անտանտի երկրների միջև ծագած միջպետական հակասությունների, առկա բարդությունների և բոլշևիկների հետ հնարավոր համագործակցության հողի վրա: Փաստաթղթում նշվում էր, որ դրան զուգահեռ թուրքերը զինում են ժողովրդին: Այնուհետև շատ հետաքրքիր մի փաստ է բերվում, ըստ որի՝ հայկական հետախուզությունը երիտթուրքերի հանցավոր դործունեությունը հաստատող փաստեր է ձեռք բերել, որոնց մասին էլ տեղեկացրել է անգլիական հրամանատարությանը, որը, սակայն, դրանք անուշադրության է մատնել: Սակայն շուտով այդ տեղեկատվությունը հաստատող երկու նոր փաստ ձեռք բերելուց հետո արդեն, կարևորելով հայկական հետախուզության հայթայթած տվյալները, անգլիական հրամանատարությունը մի շարք խուզարկություններ և ձերբակալություններ է կատարում, որից հետո երիտթուրքերը ստիպված լքում են մայրաքաղաքը ու տեղափոխվում Փոքր Ասիայի խորքերը՝ կենտրոնանալով Կոնիայում: Այստեղ նրանք սկսում են կուտակել զինհանդերձանքի և զինամթերքի, պարենի մեծ պաշարներ՝ դրանք ցրելով բոլոր դավառամասերում: Այս տեղեկատվության մեջ փաստեր էին բերվում և այն մասին, որ թուրքերը մեծաքանակ զենք են ուղարկում նաև Անդրկովկաս ու Արևմտահայաստան: Այս ամենից բացի՝ փաստաթղթում նշվում էր, որ Էրզրումում տեղաբաշխված է լավ զինված երեք դիվիզիա, որ երիտթուրքերն Անկարայի, Սվազի, Սեբաստիայի և այլ շրջանների քրդերի հետ նախապատրաստական լուրջ աշխատանք են տանում՝ նրանց հայերի դեմ լարելու համար[9]:

Եվս մեկ ուշագրավ փաստ: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղված 1919 թ. մայիսի 24-ի դաղտնի դրության մեջ Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Ա. Շնեուրը և հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հ. խան-Կոտուրսկին հայտնել էին, որ Էրզրում, Մուշ, Վան և Արևմտահայաստանի մյուս քաղաքներ է գործուղվել շտաբս-կապիտան Տ. Դևոյանցը[10]: Գրության մեջ ասվում էր,

---

[9] ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց. 1, գ. 92, թ. 212:

[10] Զինվորական նախարար Ք. Արարատյանի 1919 թ. հուլիսի 18-ի հրամանի համաձայն, շտաբս-կապիտան Տ. Դևոյանցը ստանում է կապիտանի կոչում. տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ- 204, ց. 1, գ. 132, թ. 392, 394:

որ վերջինս կարող է կատարել նաև արտաքին գործերի նախարարության առաջադրած խնդիրները, եթե այգպիսիք կան, և դրանք չտապ հաղորդել Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքին[11]*: Տ. Դևոյանցի վերջնական նպատակը Կ. Պոլիս հասնելն ու այնտեղ հետախուզական գործի կազմակերպումն էր: Իր «Կյանքիս դրվագներից» հուշագրության մեջ նա հանգամանորեն պատմում է հենց այդ մասին, հաղորդում որոշ մանրամասներ, որոնք, անշուշտ, անհրաժեշտ է ընդունել որոշ վերապահությամբ՝ ցուցաբերելով դրանց նկատմամբ քննադատական մոտեցում: Տ. Դևոյանցը մասնավորապես գրում է. «Ես գնդապետ Շնձուրի (Ա. Շնեուրի աղավաղված անունն է.— Վ. Վ.) հետ պետք է ուղևորվեի Պոլիս և Կիլիկիա որոշ զինվորական միսիայով: Վերջը Շնձուրը պետք է վերադառնար Հայաստան, իսկ ես պետք է մնայի Պոլիս՝ հետախուզական դործը կազմակերպելու համար»*[12]*: Կ. Պոլսում Տ. Դևոյանցը հայթայթում և Հայաստան է ուղարկում արժեքավոր տեղեկատվություն Թուրքիայում ծավալվող իրադարձությունների ու տարածաշրջանային քաղաքական զանազան նորությունների մասին: «Տեղեկատվության տեսակետով շատ արժեքավոր էին Ե. Թ.-ի ամեն օր ինձ տված լուրերը,— դրում է Տ.Դևոյանցը:— Ամեն օր նա տալիս էր ինձ պատճենները Թուրքիո բոլոր նախարարությունների դաղանի նամակների, հրահանդների, հեռագիրների, ստացված ու ուղարկված»*[13]*: Հայ հետախույզը մեծ կարևորություն է տվել հավաքված տեղեկատվությանը, և ամեն ջանք գործադրել է, որ այն լինի նպատակային ու ծառայի հիմնական խնդրին, այն է՝ Հայաստանի Հանրապետության աղգային-պետական անվտանգության ամրապնդմանը:*

Հայկական հետախուզական ծառայության գործունեության քիչ թե շատ լիարժեք լուսաբանման տեսանկյունից կարևոր է նաև գեներալ-մայոր Հ. Հախվերդյանի[14] *1919 թ. օգոստոսի 16-ի հեռագիրը՝ ուղղված Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական վարչության ղեկավար դեներալ-մայոր Հ. Քիշմիշյանին, որի հիմքում ընկած էր Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի օգոստոսի 15-ի հետախուզական ամփոփագիրը: Դրանում մասնավորապես հաղորդվում էր, որ Էրզրումում Թուրքերը կազմավորել են անջատողական տրամադրություններ հետամտող կառավարություն՝ «Շուրա» անվանումով, և որ այն ձևավորվել է կենտրոնական կառավարության հրահանգի համաձայն: Նպատակն էլ այն էր, որ կենտրոնական կառավարությունը դաշնակից պետությունների առաջ իր վրայից գցեր հայերին Արևմտահայաստանի 6 վիլայեթները մուտքի թույլտվություն չտալու պատասխանատվությունը: Դրա իրականացումը դրվում էր «Շուրայի» վրա: Այդ իսկ*

---

[11] *ՀԱԱ, ֆ. Պ- 200, ց. 1, գ. 155, թ. 10:*

[12] *Տ. Դ է ո յ ե ա ն ց. Կեանքիս դրուագներից.— «Հայրենիք» (Բոստոն), 1945, №1, հունվար - փետրվար, էջ 60-61:*

[13] *Նույն տեղում:*

[14] *1919 թ. մարտի 27-ին ՀՀ զինվորական նախարարի պաշտոնից պաշտոնաթող լինելուց հետո Հ. Հախվերդյանը նշանակվում է զինվորական նախարարությանը կից Ռազմական խորհրդի անդամ, իսկ ապրիլի 25-ին զինվորական նախարար Ք. Արարատյանի հրամանի համաձայն՝ նաև ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի (սպարապետ) շտաբի պետ: ՀՀ կառավարության 1919 թ. մայիսի 28-ի որոշմամբ նրան շնորհվեց գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում.— տե՛ս* М. К а р а п е т я н. Генерал-лейтенант Ованес Ахвердян. Ереван, 2003, с. 10-11, *«Ուրբաթ», 25. V. 1990:*

նպատակով էլ վերջինիս տրամադրության տակ էին դրվել թուրքական կանոնավոր զորամասեր՝ Կարաուրդան–Էրզրում–Երզնկա գծի վրա, Ալաշկերտի հովտում տեղաբաշխվել էին 3-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ և 36-րդ դիվիզիաները, մերձծովյան հատվածում՝ Տրապիզոնի շրջանում, 31-րդ դիվիզիան, և, ընդ որում, Երևանի ուղղությամբ՝ 2 հազարանոց չեթեյական հրոսակախումբը՝ զինված 4 թնդանոթով և 8 գնդացրով: Հայտնվում էր նաև, որ Էրզրումում «Շուրան» գումարել է խորհրդակցություն, որին ներկա են եղել Ադրբեջանից, Վրաստանից, Լաղիստանից և Աջարիայից ժամանած պատգամավորներ: Ընդունված որոշման մեջ կարևոր տեղ էր հատկացվել տղամարդ բնակչության զինմանը: Նշվում էր, որ հանդիպումը նախագահել է Մուսաաֆա Քեմալը թուրքական զորքերի հրամանատարը: Հեռագրում մասնավորապես կարևորվում էր այն հանգամանքը, որ խորհրդակցության ընդունած կոչում մուսուլմաններին սրբազան պատերազմի էին մղում՝ հրահանգելով 6 վիլայեթները պաշտպանել հայերի ոտնձգություններից, հաշվի չնստելով Կ. Պոլսի դիրեկտիվների հետ, նույնիսկ այն դեպքերում, եթե դաշնակիցները զբաղեցնեն թուրքական տարածքները: Առավել հետաքրքրություն է ներկայացնում տեղեկատվության վերջնամասը, որում հայտնվում էր, որ Էրզրումից Սարիղամիշ ուղարկված զենքը, զինամթերքն ու հանդերձանքը նորից հետ է վերադարձվել Էրզրում: Հաղորդվում էր նաև Ադրբեջանում հայտարարված 18-ից 45 տարեկանների զորահավաքի մասին[15]:

1919 թ. նոյեմբերի 9-ի ամփոփագրում Գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ կապիտան Վ. Մուրադյանը, նրա օգնական պոդպորուչիկ Մ.Դոդոխյանն արժեքավոր տեղեկություններ են հաղորդել Մալաթիայում և Խարփութում երիտթուրքերի գործունեության, Ալաշկերտ-Ղարաքիլիսայի շրջանում գործող թուրքական 11-րդ դիվիզիայի տեղաշարժերի մասին, որի շտաբը գտնվում էր Բայազետում: Սակայն ամփոփագրում առավել ուշադրավը հետևյալ տվյալն է. խոսքը ծովային նախարար Սալիհ փաշայի զինվորական նախարարին ուղղված հեռագրի մասին է, որտեղ «Միլլի» հայտնի շարժման զինվորականներին, զինվորներին խորհուրդ էր տրվում արտաքնապես ցույց տալ իրենց պատրաստակամությունն ազգային զինված ուժերը ցրելու մասին, որն Անտանտի երկրների պահանջն էր, իսկ իրականում գաղտնապես պետք է արագացնեին զինված ուժերի ձևավորման գործընթացները՝ հանձնարարելով բացահայտ հանդես գալ թշնամու դեմ միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը և պատեհ առիթը լինի: Թատերական ներկայացում կազմակերպելով թուրք քաղաքական-զինվորական առաջնորդները, իբր թե, կարգադրում էին ցրել 17-րդ կորպուսը, սակայն իրականում դրա զինվորները և սպաները մտնում էին 14-րդ կորպուսի մեջ՝ հույների դեմ պատերազմելու համար: Հետախուզական ամփոփագրում նշվում էր նաև այն մասին, որ Տրապիզոն–Էրզրումի շրջանում գտնվող 3-րդ դիվիզիայում հաշվվում է 1750 սվին, Վան–Ալաշկերտ, Բայազետի հատվածում գտնվող 11-րդ դիվիզիայում՝ 3300 զինվոր, իսկ Խորասան-

[15] ՀԱԱ, ֆ.Պ- 276, ց. 1, գ. 133, թ. 166:

Հասան Կալայում տեղակայված 12-րդ թուրքական դիվիզիայի կազմում՝ 2000 զինվոր[16]: Այս ամենը վկայում է, որ հետախուզության հաղորդած տվյալներով որոշակի պատկերացում կարելի էր կազմել թուրքական ուժերի մասին, և որ հավաքված տեղեկատվությունը բավարար էր թշնամու դեմ ռազմաքաղաքական նախապատրաստություններ կատարելու համար:

Տարածաշրջանային, այդ թվում և Հայաստանի շուրջը ծավալվող ռազմաքաղաքական իրադարձությունների մասին հետախուզական կարևոր փաստեր են պարունակվում նաև զինվորական նախարարին ուղղված Գլխավոր շտաբի պետի 1919 թ. դեկտեմբերի 21-ի զեկուցագրում: Դրանում նշվում էր, որ բազմիցս հաղորդվել է Մուստաֆա Քեմալի կողմից գլխավորվող ազգային ուժերի հապշտապ կազմավորման մասին, որը Հայաստանի համար դիտվում էր շատ վտանգավոր: Այս հանգամանքն անտեսվում և լիարժեքորեն հաշվի չէր առնվում Հայաստանի Հանրապետության քաղաքական-կուսակցական և ռազմական ղեկավար շրջանների կողմից, որոնք ամբողջովին գտնվում էին 1919 թ. մայիսի 28-ի Միացյալ Անկախ Հայաստանի մասին հայտարարության և դաշնակիցների խոստումների ազդեցության տակ: Զեկուցագրում հաղորդվում էր, որ չնայած թուրքական ազգային ուժերի ղեկավարների միջև առկա են որոշ տարաձայնություններ, սակայն Քյազիմ Կարաբեքիր փաշան և Ռաուֆ բեյը, քաջատեղյակ լինելով, որ Անտանտի երկրներն իրենց տրամադրության տակ չունեն բավարար ուժեր, ըստ այդմ էլ անվճռական են (սա վկայում է, որ թուրքերը լավ տեղեկացված էին, և որոշակիորեն պատկերացնում էին տարածաշրջանային հիմնախնդիրներն ու անելիքները), ցանկանում էին օգտվել իրենց համար չափազանց բարենպաստ այդ պահից և գրավել Սմիռնան ու մինչև Արփաչայ ընկած տարածքի հյուսիսային մասը, որպեսզի Փարիզի վեհաժողովին կանգնեցնեն կատարված փաստի առաջ: Որպես հայկական սահմանին հարող տարածքներում թուրքական ուժերի աշխուժացման ապացույց, զեկուցագրում նշվում էր հակառակորդի զորամասերի զորաշարժերի, և, մասնավորապես, Օլթիի շրջանի ուղղությամբ 9-րդ դիվիզիայի շարժման մասին, Շարուր-Նախիջևանի ու Զանգիբասարի շրջաններին հարող տարածքներում 11-րդ գիվիզիոնի գործողությունների վերաբերյալ, և Տրապիզոնի ու Էրզրումի շրջաններում 3-րդ և 12-րդ գիվիզիաների վերախմբավորումների մասին: Հաղորդվում էր նաև , որ Երզնկայի ու Շինիխ-Գարահիսարի շրջաններից Էրզրումի վրայով Կովկաս են տեղաշարժվում չեթնիկների փոքր խմբեր, որ «Միլլի» շարժումն ավելի ակտիվ է գործում Թորթումի շրջանում, և որի առանձին խմբեր փոխադրվում են Օլթիի, Ալաշկերտի հովիտները, Աարիդամիշի, Կաղզվանի, Քուլպի, Շարուր-Նախիջևանի շրջանները[17]: Զեկուցագրում կարևոր հետևություն էր արվում այն մասին, որ բոլշևիկների հաջողություններից Թուրքիայում ոգևորվել են և շտապում են այն օգտագործել իրենց պանիսլամիստական նպատակներին հասնելու համար, մասնավորապես՝ Հայկական հարցի «լուծման» առումով: Ելնելով դրանից կապիտան Վ. Մուրադյանը եզրա-

[16] ՀԱԱ, ֆ.Պ- 199, ց. 1, գ. 73 (71) , թ. 187–188:
[17] ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց. 1, գ. 271, թ. 85-86:

կացնում էր, որ անհրաժեշտ է իսկույն եւթ վերոգրյալի մասին տեղեկացնել դաշնակիցներին (իբր թե վերջիններս անտեղյակ էին անցուդարձից և քաղաքական գործընթացների իրական ընթացքից), որպեսզի նրանք միջոցներ ձեռնարկեն հայերի ֆիզիկական գոյության ապահովման համար[18]:

Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի 1920 թ. փետրվարի 7-ի ամփոփագրում կապիտան Վ. Մուրադյանը և պոդպորուչիկ Մ. Դոդոխյանը հայտնում են, որ թուրքական 15-րդ կորպուսը, օգտագործելով կազմացրված 4-րդ բանակի զինանոցները և համալրումներ կատարելով, պատրաստվում է մոտենալ հայկական սահմանին, և որ միաժամանակ ուժեղացվում են 12-րդ, 13-րդ, 14-րդ և 20-րդ կորպուսները: Հատուկ նշվում էր, որ հենց այս կորպուսների գործողությունների հետ էլ պետք է իր քայլերը համաձայնեցնի Ադրբեջանի բանակը և մշակի համատեղ պլան, ինչի համար էլ այստեղ են հրավիրվել թուրք սպա հրահանգիչներ[19]:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև հետախուզական բաժանմունքի 1920 թ. ապրիլի 5-ի ամփոփագիրը, որը կարևոր տեղեկատվություն է հաղորդում Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունների, դեպքերի և թուրքական բանակի թվակազմի մասին: Հաղորդվում էր, որ բանակի թվակազմը հաշվվում է 51.476 մարդ, իսկ Էրզրումում գտնվող 15-րդ կորպուսինը՝ 13.338 մարդ: Նշվում էր, որ այս կորպուսի դիվիզիաներից 12-րդի շտաբը գտնվում է Խորասանում, 35-րդ գնդինը՝ Փեվրի-Քեյում, 36-ինը՝ Զիվինում, Հասան-Կալայում գտնվում է հրետանային մարտկոց՝ 4 հրանոթով: Գործակալական տվյալների համաձայն, կորպուսը պատրաստվում էր ռազմական գործողություններ իրականացնել հայկական սահմանի վրա՝ նպատակ ունենալով հայերին հետ շպրտել Կարսի նահանգից, վերականգնել, այսպես կոչված, Հարավարևմտյան Մուսուլմանական Հանրապետությունը՝ դրանով իսկ կապ հաստատելով Ադրբեջանի հետ: Ամփոփագրում նշվում էր, որ Կ. Պոլսի կառավարությունը հանձնարարել է կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային առաջիկայում ձեռնպահ մնալ ռազմական գործողություններից, սակայն մշտապես պատրաստ լինել հնարավոր ակտիվ գործողությունների: Փաստաթղթից պարզվում է, որ կորպուսի զորամասերի առջև գրված են եղել որոշակի նպատակներ. այսպես, Խալիլ բեյի զորամասին հրահանգ է տրվել ամրապնդվել Մերդենեկ-Արգահան ուղղությամբ՝ Արդահանի և Կարսի մարզերը գրավելու համար, իսկ մյուս դիվիզիաները պետք է գործեին Սարիղամիշի ուղղությամբ, որի համար «Շուրային» հատկացվել է 700 բերդանկա, 4400 փամփուշտ»[20]:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Առաջին Հանրապետության հետախուզական ծառայությունը հնարավորի չրջանակներում անհրաժեշտ աշխատանքներ է կատարել երկրի անվտանգության ապահովման համար՝ գործելով աշխարհաքաղաքական շատ խճճված, բարդ միջավայրում և չունենալով հուսալի դաշնակիցներ: Այնուամենայնիվ, հերոսաբար դիմակայելով այդ դժվարություններին, հետախուզության աշխա-

[18] Նույն տեղում, թ. 86:
[19] Նույն տեղում, գ. 441, թ. 33:
[20] Նույն տեղում, գ. 427, մաս II, թ. 249:

տակիցների համառ ջանքերով հայթայթվում էին արժեքավոր տեղեկություններ, որոնց միջոցով հնարավոր էր դառնում պարզել Անգլիայի, Ֆրանսիայի և այլ երկրների դիրքորոշումը տարածաշրջանային հարցերում, մասնավորապես հասկանալ թուրքերի նկատմամբ նրանց գործողությունների որոշ շարժառիթները: Այս առումով ուշագրավ է Թիֆլիսից գեներալ-մայոր Հ. Քիշմիշյանի 1920 թ. հունիսի 18-ի հեռագիրը հասցեագրված Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքին: Դրանում հայտնվում էր, որ ֆրանսիական զորքերի կողմից Փոքր Ասիայում գերի վերցված թուրք զինվորների մոտ եղել են անգլիական նոր հրացաններ՝ փամփուշտների մեծ պաշարով: Ասվում էր, որ այդ զենքը թուրքերին տվել են անգլիացիները[21]: Սա խոսում է այն մասին, որ անգլիացիների համար մերձավորարևելյան իրենց քաղաքականության մեջ հաստատուն ոչինչ չկար, վկայում է, որ նույնիսկ մինչև Սևրը Մեծ Բրիտանիան եզրեր էր փնտրում Թուրքիայի հետ ելնելով 1917 թ. հոկտեմբերյան բոլշևիկյան հեղաշրջումից հետո աշխարհում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողությունների հաշվարկից:

Հարկ է հատուկ նշել, որ հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի աշխատակիցների օպերատիվ աշխատանքի շնորհիվ Հայաստանի տարածքում կանխվել են թշնամու գործակալների վնասարար գործունեության մի շարք դեպքեր: Այսպես, 1919 թ. դեկտեմբերի սկզբին ձերբակալվում է Ադրբեջանից Նախիջևան դործուղված լրտես, ավստրիական ծառայության նախկին սպա, վրացահպատակ Անտոն Մարոկուտին: Նրա գործը լսվում է ՀՀ զինվորական դատարանի կողմից, և վերջինս դատապարտվում է 15 տարվա ազատազրկման[22]:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև, այսպես կոչված, Թեմուր Բեկ-Մակինսկու և Թեքինսկու դործը: 1920 թ. հունիսի 3-ին ՀՀ զինվորական դատարանը լսում է Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցներ Մաշադի Մամեդով Մաշադի Հուսեյն Օղլու, Հուսեյն Վալի Օղլու և Մուսա Մաշադի Մամեդ Օղլու դատը, որոնք գործել էին դիվանագիտական հավատարմատար Թեմուր Բեկ-Մակինսկու անմիջական հանձնարարությամբ: Նրանք սերտորեն համագործակցելով դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկու հետ՝ որոշակի պայմանավորվածություն էին ձեռք բերել իրականացնելիք գործողությունների ու անելիքների վերաբերյալ: Ըստ այդմ էլ, Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության վերոնշյալ աշխատակիցները ՀՀ զինվորական դատարանի կողմից մեղադրվում են զանգիբասարյան խռովարարների գործողություններին աջակցելու մեջ, որի համար Ադրբեջանի կառավարությունը հատկացրել էր շուրջ 600 հազար ռուբլի՝ ադրբեջանական և կովկասյան բոներով: Հակապետական և հակահայկական քայքայիչ այդ գործունեության համար Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցներ հանդիսացող լրտեսներից երկուսը դատապարտվում են 10 տարվա բանտարկության, իսկ Հուսեյն Վալի Օղլին անժամկետ աքսո-

---

[21] ՀԱԱ, ֆ.Պ- 276, ց. 1, գ.184, թ. 65:

[22] Նույն տեղում, գ. 196, թ. 91, 95-97, 127-137, 163-167, 172-174, 176-177, ֆ.Պ- 200, ց. 1, գ. 212, թ. 162, 175, գ. 216, թ. 50-57, 64-65, 113-115:

րի: Դատական այդ գործի մասին ՀՀ արտաքին գործերի նախարարությունը տեղեկատվություն է ուղարկում Հռոմում, Լոնդոնում, Վաշինգտոնում և այլուր պաշտոնավարող Հայաստանի դեսպաններին՝ հանձնարարելով նրանց Ադրբեջանի գործակալների հակահայկական, հակապետական գործունեության և դատավարության արդյունքների մասին համապատասխան հաղորդագրություն հրապարակել մի շարք հեղինակավոր թերթերում[23]:

Ուշագրավ տեղեկատվություն է պարունակում Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի 1920 թ. հուլիսի 3-ի ամփոփագիրը: Դրանում հաղորդվում է, որ Կոստանդնուպոլսում կազմակերպվել է Հետախուզական բյուրո, որի գործակալները պետք է աշխատեին Վրաստանի սահմաններում և հետևեին Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Հայտնվում էր, որ այդ նպատակով հավաքագրվել են հայերեն լեզվին տիրապետող վրացիներ և ռուսներ: Բացի այդ, ամփոփագրում հատուկ շեշտվում էր, որ Գերմանիայում տպագրվել են մեկ միլիոն թուրքական կեղծ լիրաներ, որոնք պետք է ուղարկվեին Կովկաս: Ադրբեջանին աջակցելու նպատակով այդ փողերը գլխավորապես պետք է օգտագործվեին Հայաստանում՝ նպատակ հետապնդելով վերջնականապես գցել հայկական չեկերի կուրսը: Տեղեկագրում ընգծվում էր, որ վերոնշյալ Հետախուզական բյուրոյի գործակալների թվում կան նաև հայեր, որոնք պետք է մասնակցեին Հայաստանում և մասնավորապես Երևանում կեղծ փողերի տարածմանը[24]:

1920 թ. հոկտեմբերի 6-ին Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական կցորդ (ինչպես նաև հետախուզական գործերի փաստացի ղեկավար) Հ. Քիշմիշյանի ստորագրությամբ Գլխավոր շտաբ է ուղարկվում բավականին արժեքավոր մի հեռագիր - տեղեկատվություն, որն ստացվել էր Էրզրումից Հայաստանի վրայով Թիֆլիս վերադարձած Վրաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի մի սպայի միջոցով: Այդ փաստաթուղթը տվյալներ էր պարունակում Կովկասյան ճակատում Քեմալ փաշայի ուժերի դասավորության մասին՝ սեպտեմբերի 3-ի դրությամբ: Տեղեկագրում նշվում էր. 1) Թուրքական 3-րդ կովկասյան դիվիզիան (6 հազար սվին) ժանդարմական գումարտակի հետ տեղաբաշխված է Սև ծովի ափին, իսկ շտաբը գտնվում է Տրապիզոնից 18 վերստ հեռավորության վրա, դեպի Բայբուրդի կողմը, 2) 9-րդ դիվիզիան, որի պետը Խալիտ բեյն էր, իր կազմում ուներ մոտ 5 հազար զինվոր և մեկ հրետանային գունդ, իսկ շտաբը, ըստ մի վարկածի, գտնվում էր Օլթիում, մյուս տարբերակի համաձայն՝ Կոսորում, 3) 12-րդ դիվիզիան, որը տեղաբաշխված էր Կարսի մարզում՝ մինչև Արոս, ուներ 6 հազար սվին՝ գումարած հրետանային գունդը, կից ունենալով 15-րդ հեծելագունդը, 4) 11-րդ դիվիզիայի շտաբը գտնվում էր Բայազետում, պետը՝ Ջավադ-բեյն էր. շտաբին կից կար մեկ պահակային գումարտակ և սակրավորների վաշտ՝ 250 հոգուց բաղկացած, իսկ դիվիզիայի ընդհանուր թվաքանակը հասնում էր

[23] ՀԱԱ, ֆ. Պ- 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 284, 288, 290, 322-327, գ. 249, մաս II, թ. 415, 427, 431, ֆ. Պ- 199, ց. 1, գ. 73, թ. 155–156:
[24] ՀԱԱ, ֆ. Պ- 200, ց. 1, գ. 33, թ. 32:

5000-ի և նախատեսված էր Իդդիրի ուղղությամբ դործողության համար: Փաստաթղթում ասվում էր, որ զորամասերը հանդերձանք չունեն, որ այն չկա և համբարակապետական պահեստներում, որ գրամի բացակայության պատճառով սպաներին և զինվորներին 6 ամսվա ռոճիկ չի վճարվել, որի հետևանքով զորամասերում աճել են դժգոհությունները և խմորումները[25]:

Ինչպես տեսնում ենք, սույն տեղեկատվությունն որոշակի արժեք ուներ, քանզի կարևոր տվյալներ էր հաղորդում թուրքական զորքերի տեղաշարժերի և թվաքանակի մասին, մանավանդ որ այն սեպտեմբերի 3-ի վիճակով է ներկայացված, այսինքն՝ մինչև թուրք-հայկական պատերազմի սկսվելը, որին դեռ առնվազն երկու շաբաթից ավելի ժամանակ կար, իսկ այդ ընթացքում կարելի էր նախապատրաստական որոշակի աշխատանքներ կատարել: Տեղեկատվությունը, սակայն, ուներ որոշ թերություններ. դրանցից են թուրքական բանակի թվաքանակի, ռազմունակության, բարոյահոգեբանական պատրաստվածության ու ոգու, ինչպես նաև նյութատեխնիկական բազայի որոշ կողմերի թերագնահատումը: Մյուս կողմից էլ ենթադրելի է, որ վրացական զորքերի Գլխավոր շտաբը միտումնավոր էր որոշ տվյալներ աղճատված տարածել, դրանով իսկ ձգտելով հայկական կողմին չփոթության մեջ գցել, խճճել, հայտնի տարածքներում (Կարս, Բաթում, Արդահան և այլն) թուրքերի հետ իրենց ընդհանուր շահերից ելնելով: Այդուհանդերձ, հարկ է հատուկ նշել, որ սույն տեղեկատվությունը, որը իր թերություններով հանդերձ, անկասկած, որոշակի արժեք ուներ, անհասկանալի պատճառներով բավականին ուշ (դուցեև դիտավորյալ) հասավ Երևան՝ հոկտեմբերի սկզբին, երբ թուրք-հայկական պատերազմը սրվում էր, և վճռորոշ դեր չկատարեց ՀՀ զինված ուժերի վերադասավորման և թշնամուն հակահարված տալու տեսանկյունից: Մասամբ այն հետաքրքրեց ՀՀ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանին. որոշ հարցերի պարզաբանման նպատակով նա հոկտեմբերի 7-ին հեռադրով դիմեց գեներալ-մայոր Քիշմիշյանին, որով հայտնում էր զինվորական նախարարության կարծիքը հեռագրի կապակցությամբ, նշելով, որ հաղորդված տվյալները համընկնում են իրենց ունեցածի հետ, սակայն խնդրում էր ստուգել, թե թուրքերն ի՞նչ ուժեր են կենտրոնացրել Արդահանի մարզում, թե որտե՞ղ են դտնվում 12-րդ դիվիզիան, 35-րդ և 36-րդ դնդերը[26]:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ հայ հետախույզներն ոչ միայն նախանձախնդիր ու շահագրգռված էին իրենց կողմից հաղորդվող տեղեկատվության հավաստիության, այլև դրանց դաղտնիության ապահովման հարցերում: Այսպես, 1920 թ. մայիսի 13-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությանը կից տեղեկատվական բաժանմունքի պետին ուղղված դրության մեջ Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ Տ. Դևոյանցն իր վրդովմունքն էր հայտնում մայիսի 11-ին ՀՀ արտաքին դործերի նախարարությանն ուղղված հետախուզական ամփոփագրերից մեկի ապադաղտնազերծման կապակցությամբ: Դրա հետևանքով դաղտնի տեղեկատվությունը հայկական սահմանի վրա թուրքական նախապատրաստությունների մասին անհասկանա-

---

[25] ՀԱԱ, ֆ. Պ- 276, ց. 1, գ. 154, թ. 118:
[26] Նույն տեղում, թ.119:

լի հանգամանքներում հայտնվել էր՝ «Հառաջ» թերթի խմբագրությունում և տպագրվել մայիսի 13-ի համարում[27]: Տ. Դևոյանցը խիստ դժգոհում էր այդ փաստից և պահանջում գտնել ու պատժել մեղավորներին հանցավոր անփութության համար[28]:

Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայությունը, ինչպես տեսնում ենք, ձեռնարկելով կայացման գործընթացներ, ձեռք է բերել անհրաժեշտ տեղեկատվություն հակառակորդի կողմից նախապատրաստվող գործողությունների մասին: Այդ տեղեկատվությունը ներկայացվել է Հայաստանի պետական-կուսակցական և զինվորական իշխանություններին՝ համապատասխան քայլեր ձեռնարկելու համար: Սակայն դրանց արդյունավետությունը ցածր էր, քանզի այդ տեղեկատվությունը ոչ միշտ էր հաշվառվում, դրանցից չէին արվում ռազմաքաղաքական անհրաժեշտ հետևություններ, որին խոչընդոտում էր նաև ՀՀ շուրջը ձևավորված աշխարհաքաղաքական մթնոլորտը: Հանրապետության ղեկավարությունը իր հույսը հիմնականում դրել էր Անտանտի իր դաշնակիցների խոստումների վրա, որոնք, սակայն, այդպես էլ չիրագործվեցին: Տ. Դևոյանցը «Կյանքիս դրվագներից» հուշաշարքում, ի մի բերելով հետախուզական մի շարք տեղեկագրեր և այլևայլ վավերագրեր, պնդում է, որ «Հայաստանի պատերազմական նախարարությունը և Փարիզի Հայաստանի պատվիրակությունը դեռ 1920 թ. ապրիլին դիտեին տաճիկ-մեծամասնական հարձակումների մասին»[29]: Այնուհետև նա խիստ բազմանշանակ հավելում է. «Հայաստանի հետախուզական բաժանմունքի ստացած գաղտնի զեկուցումների մեջ շատ անգամներ շեշտվում էր, որ Տաճկաստանի ազգային ուժերը Մուստաֆա Քեմալ փաշայի ղեկավարությամբ շտապ վերակազմվում, կազմակերպվում են: Եվ, հակառակ դաշնակիցների կտրուկ հրահանգներին, երիտասարդ թուրքեր հասան իրենց նպատակին, այն է կազմեցին Ֆերիզ Ռիզա փաշայի նոր դահլիճը, բացառաբար իրենց կուսակիցներից, և այդպիսով «Սիլլի Թաշկիլաթի» դրությունը դարձավ օրինական»[30]: Տ.Դևոյանցն ուշագրավ դիտարկում է կատարում նաև Սովետական Ռուսաստանի նկատմամբ հայ քաղաքական ուժերի բռնած դիրքորոշման վերաբերյալ և, կարելի է ասել, հանգում է աքսիոմատիկ եզրակացության. «Եվրոպական պետություններից ամենեն շատ Անգլիան էր օգնում ռուսական ճերմակ բանակներին, ուստի սովետները որոշ չարժում առաջ բերին Անգլիո դեմ մահմեդական երկրների մեջ և հովանավորեցին Էնվեր և Նուրի փաշաներին ու նրանց նմաններին...Իհարկե, Սովետական Ռուսաստանի այս քայլը վնասում էր Հայաստանին, բայց նկատի ունեցեք, որ դիվանագիտությունը գութ չունի: Այստեղ պետք է ավելացնեմ իմ համոզումը, որ Սովետական Ռուսաստանը թեև այդ շրջանին հովանավորում էր Քեմալին, բայց չան հետ բարեկամանալով փայտը միշտ իր ձեռքին էր պահում ու հետևում նրա բոլոր քայլերին:

---

[27] ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 300-301:

[28] Նույն տեղում, թ. 299, 303, 304:

[29] Տ. Դ է ո յ ե ա ն ց. Կեանքիս դրուագներից.— «Հայրենիք», 1947, №2, մարտ-ապրիլ, էջ 107:

[30] Նույն տեղում, 1946, №2, մարտ-ապրիլ, էջ 103:

Եվ այժմ մենք հայերս, մնացել ենք մեն մենակ դաշնակիցների թշնամիներով շրջապատված, որոնք սպառնում են փոքրիկ Հայաստանի վերջին ծուխը մարել: Օգնություն ենք խնդրում Ֆրանսիայից, Անգլիայից, Ամերիկայից – բոլորն էլ խուլ են ձևանում և իրար վրա են նետում մեր դործը: Ապերախտ աշխարհ. մեկ տարի առաջ նրանք մեզ պետք ունեին, քաջալերում էին մեր դիմադրությունը Բաքվի տակ, իսկ այժմ... Ի հաշիվ Հայաստանի Ազրբեյջանը շարունակում էր ամեն միջոցներով միշտ իր սահմանները ընդարձակել, դրավել զուտ հայաբնակ հողամասերը և այդ իր քայլերը ոչ միայն չէին կասեցվում մեր երեկվա Դաշնակիցների կողմից, այլ երբեմն խրախուսվում էին, որովհետև իրենց համար ձեռնտու էր տկարացնել Ռուսաստանը, ուժեղացնելով Ազրբեյջանը»[31]:

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ РАЗВЕДЫВАТЕЛЬНОЙ СЛУЖБЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ВАНИК ВИРАБЯН

Резюме

Спецслужбы составляли неотъемлемую часть государственной системы безопасности Первой Республики Армения. Еще в августе 1918 г. правительство выделило первые финансовые средства для организации разведывательной и контрразведывательной службы, что завершилось созданием в апреле 1919 г. в Главном штабе военного министерства отдельного разведывательного и контрразведывательного отделения. Архивные документы и иные материалы показывают, с какими трудностями сталкивалась молодая и неопытная разведывательная служба РА в деле приобретения необходимой информации с целью приостановления происков спецслужб противников. Результаты деятельности служб армянской разведки не всегда реально оценивались и учитывались руководящими политико-партийными и военными кругами Армении, которая все свои надежды связывала с великими державами — со своими антантовскими союзниками.

[31] *Նույն տեղում, 1945, №2 , մարտ-ապրիլ, էջ 79, 1945, №5, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 100:*

FROM THE HISTORY OF THE ACTIVITIES OF THE INTELLIGENCE SERVICE OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

VANIK VIRABYAN.

Summary

Special services were considered to be an inseparable part of the State security system of the First Republic of Armenia. In August 1918, the Government ear-marked the first financial means for organizing the Intelligence and Counter-intelligence Service in the First Republic of Armenia, which was over by formation in April 1919, in the Main Headquarters of the Military Ministry of a separate Intelligence and Counter-intelligence Section. Archive documents and other materials come to prove what difficulties the young and inexperienced Intelligence Service of RA had to cope with in acquiring the required information to stop the intrigues plotted by the Special services of enemies. The activities of the Armenian Intelligence Services were not always really evaluated and taken into account in the political and military circles of Armenia, which reposed their hopes on the Great Powers – on their Entente allies.